ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2011 թվականի թիվ 43- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԾՆՆԴՅԱՆ 125- ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, և հիմք ընդունելով ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի 2011 թվականի մարտի 10-ի թիվ 02/14.3/3304-11 գրությունը

որոշում եմ.

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզում Գարեգին Նժդեհի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառումների ծրագիրը, համաձայն հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին - համագործակցելով ՀՀ Տավուշի մարզպետարանի և համայնքներում գործող ուսումնական հաստատությունների ու ձեռնարկությունների հետ, միջոցներ ձեռք առնել սույն ծրագրով նախատեսված միջոցառումները սահմանված ժամկետներում կազմակերպված իրականացնելու համար:

3. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Մ. Մխիթարյանին – համայնքների ղեկավարների հետ միասին կազմակերպել տեսանելի վայրերում թեմատիկ պաստառների տեղադրումը:

4. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Ա. Փաշինյանին - համագործակցելով մարզի ուսումնական հաստատությունների հետ, կազմակերպել Գ. Նժդեհի ասույթներով ասմունքի, նժդեհյան թեմաներով շարադրությունների և ազգային-հայրենասիրական երգերի մարզային մրցույթների կազմակերպում և ռազմա-հայրենասիրական խաղերի անցկացում:

5. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ա. Մելիքսեթյանին – մարզի տարածքում գործող ՁԼՄ-ներով կազմակերպել Գարեգին Նժդեհի կյանքի ու գործունեության լուսաբանումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. ապրիլի 26
ք. Իջևան

Հավելված

Հաստատված է ՀՀ Տավուշի մարզպետի
26 ապրիլի 2011 թ. թիվ 43-Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ 125-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

h/h	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը	Անցկացման ժամկետը	Կատարողը	Միջոցառման կարճ նկարագիրը
1.	Գ.Նժդեհի ասույթներով պաստառների պատրաստում և տեղադրում	Մարզի տարածքում	2011թ.	ՀՀ Տավուշի մարզպետարան	Պատրաստված պաստառները կտեղադրվեն մարզի համայնքների տեսանելի վայրերում:
2.	Գ.Նժդեհի ասույթներով ասմունքի մարզային մրցույթի կազմակերպում	Մարզի տարածքում	2011թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ Տավուշի մարզպետարան	Ասմունքի համայնքային և մարզային մրցույթների կազմակերպում: Պարգևատրումներ՝ հաղթողներին:
3.	Նժդեհյան թեմաներով շարադրությունների կազմակերպում մարզի դպրոցներում, քոլեջներում, ԲՈՒՀ-երում	Մարզի հանրակրթական դպրոցներ, քոլեջներ, ԲՈՒՀ-եր	2011թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ Տավուշի մարզպետարան, քոլեջներ, ԲՈՒՀ-եր	Նախօրոք ընտրված թեմաներով կանցկացվեն շարադրությունների մրցույթներ: Լավագույնները կպարգևատրվեն նվերներով:

4.	Գ.Նժդեհի կյանքի և գործունեության լուսաբանում՝ մարզի ԶԼՄ-ներով	Մարզի տարածքում	2011թ.	ՀՀ Տավուշի մարզպետարան, համայնքներ և ՀԿ-ներ	Մարզի թերթերով, այլ տպագիր հրատարակություններով և հետուստաալիքներով կկազմակերպվեն հաղորդումներ:
5.	Անվանակոչություններ մարզի համայնքներում և մարզային ենթակայության կառույցներում. ա/ Դիլիջանի թիվ 1 դպրոցի անվանակոչություն, բակում հուշար-ձանի տեղադրում բ/ Իջևանում թաղամասի կամ փողոցի անվանակոչություն գ/ Նոյեմբերյանում փողոցի անվանա-կոչություն	Մարզի համայնքներ	2011թ.	ՀՀ Տավուշի մարզպետարան, համայնքապե-տարաններ	Որոշումներ կկայացվեն փողոցներ, թաղամասեր, մշակույթի և կրթության օջախների անվանակոչության համար:
6.	Ռազմա-հայրենասիրական խաղերի կազմակերպում մարզի դպրոցներում	ՀՀ Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներ	2011թ. 4-րդ եռամսյակ	ՀՀ Տավուշի մարզպետարան	Դիպուկահարների, ձիարշավների և այլ ռազմական խաղ-մրցույթների կազմա-կերպում:
7.	Ազգային-հայրենասիրական երգերի մրցույթի կազմակերպում	ՀՀ Տավուշի մարզի մշակութային օջախներ	2011թ.	ՀՀ Տավուշի մարզպետարան	Մարզի մշակութային օջախներում կկազմակերպվեն համերգներ: Հաղթողների մասնակցությամբ կանցկացվի մարզային մրցույթ-փառատոն:
8.	Երիտասարդական ուխտագնացության կազմակերպում դեպի Գ.Նժդեհի հիշատակի վայրեր	ՀՀ տարածքում	2011թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ Տավուշի մարզպետարան, համայնքապե-տարաններ, քոլեջներ, ԲՈՒՀ-եր	Ուխտագնացությունների և էքսկուրսիաների կազմակերպում դեպի Գ.Նժդեհի հիշատակի վայրեր՝ երիտասարդների մասնակցությամբ:

9.	Այցելություն Գ.Նժդեհի մոր գերեզմանին՝ Դիլիջանում	ՀՀ Տավուշի մարզ, ք.Դիլիջան	2011թ. 2-րդ եռամսյակ	ՀՀ Տավուշի մարզպետարան, քոլեջներ, ԲՈՒՀ-եր	Այցելություն կկազմակերպվի Գ. Նժդեհի մոր գերեզմանին, ծաղկեպսակ կդրվի շիրիմին, երախտիքի խոսքեր կասվեն /այցելության ժամանակ կհրավիրվեն Գ.Նժդեհի հարազատներից/:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԴԱՎԹՅԱՆ